ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մայիս, 2024 թվականի N 14-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2024 թվականի մայիսի 14-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի փետրվարի 28-ի № 13 -Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները հաստատելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանելու մասին հարցը:
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանման համար անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

10 մայիս, 2024 թվական
ք. Երևան